

Դատական Գործ N: ԼԴ/0040/01/13

Երբ է գործը ստացվել:	29-03-2013
Քրեական գործի համարը:	ԼԴ/0040/01/13
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	58203013
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	<p>Հենրիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2009 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ինտերնետային www.visaveryfai.ru կայքից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող և ԱՄՆ բանկերում սպասարկվող բանկային գողացված պլաստիկ քարտերի տվյալներ (քարտապանի անուն, ազգանուն, 16 նիշանոց համարը, քարտի թողարկման և գործունեության ժամկետը, քարտի CVV եռանիշ կոդը), և մտադրություն ունենալով բանկային այդ հաշիվների վրա առկա գումարները հափշտակել՝ 2009 թվականի նոյեմբեր ամսին, ԱՄՆ քարտապանների հաշիվներից, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, 2 դրվագներով հափշտակել է զգալի չափերով 361.800 և 461.500 ՀՀ դրամ գումարներ (ընդհամենը 823.300 դրամ), որոնցից՝ հանցավոր ձանապարհով ստացված 461.500 ՀՀ դրամ գումարի եկամուտներն օրինականացրել է (փողերը լվացել է), արդյունքում ԱՄՆ բանկերի կողմից հափշտակված գումարների հետզանձումների պահանջներ են ներկայացվել Հայաստանյան սպասարկող բանկ հանդես եկած «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությանը:</p>
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Հենրիկ
Ազգանուն	Գրիգորյան
Հայրանուն	Արթուրի
Հասցե	ք. Վանաձոր, Տերյան 12 շենք, 2 բն.
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	11-12-1985
Հոդված_1	
Հոդված	181 Մաս 1
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 1
Դատվածություն:	Չդատված
Պաշտպան	
Անուն	Կարեն
Ազգանուն	Հակոբյան
Հասցե	ք. Երևան, Ազատության պողոտա, 24շ., 309 սենյակ
Սեռ	Արական
Վիճակագրական տողի համարը:	6.7

Խափանման միջոց:	Կալանավորում
Չափահաս:	Այո
Երբ:	29-03-2013
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Լոռու մարզ
Դատավորի անուն:	Մուշեղ Պապիկի Հարությունյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Լոռու մարզ
Դատավորի անուն:	Մուշեղ Պապիկի Հարությունյան
Այլ նշումներ:	
Երբ:	29-03-2013
Որոշումը ուղարկվել է կողմերին:	
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	29-03-2013
Այլ նշումներ:	
Երբ:	08-04-2013
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր	
Անուն	Հենրիկ
Ազգանուն	Գրիգորյան
Հայրանուն	Արթուրի
Հասցե	ՀՀ ԱՆ«Երևան-Կենտրոն»ՔԿՀ
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Կարինե
Ազգանուն	Գասպարյան
Հասցե	ք.Վանաձոր
Սեռ	Իգական
Դատավարության կողմեր	
Անուն	Արամ
Ազգանուն	Ամիրզադյան
Հասցե	ՀՀ Գլխավոր դատախազություն
Սեռ	Արական
Այլ նշումներ:	
Ժամ:	14:30
Դատավարության կողմեր	
Անուն:	Տուժողի ներկայացուցիչ՝ Անդրանիկ Արշակի Շիրինյան
Հասցե:	ք.Երևան, Ավետ Ավետյան 70 շենք., բն. 105
Տիպ:	Բանկ

Երբ:	23-04-2013
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	3-րդ
Այլ նշումներ:	
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Ամսաթիվ:	23-04-2013
Այլ նշումներ:	
Մեղադրյալ	
Անուն	Հենրիկ
Ազգանուն	Գրիգորյան
Հայրանուն	Արթուրի
Հասցե	ք.Վանաձոր,Տերյան 12 շենք,բն.2
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	11-12-1985
Ամսաթիվ:	23-04-2013
Առավել ծանր հանցագործության հոդված	
Հոդված	190 Մաս 1
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	
Այլ հանցագործության հոդվածներ	
Հոդված	181 Մաս 1
Այլ հանցագործության հոդվածներով:	
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Ղատական ակտի բովանդակությունը:	<p>Գործ թիվ ԼԴ/0040/01/13</p> <p>Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ</p> <p>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը հետևյալ կազմով՝ Նախագահող-դատավոր Մ.Հարությունյան Քարտուղար Ռ.Թամարյան Մեղադրող-դատախազ Ա.Ամիրզադյան Տուժողի ներկայացուցիչ Ա.Հարությունյան Պաշտպան Կ.Գասպարյան</p> <p>2013թ. ապրիլի 23-ին, Վանաձոր քաղաքում, դռնբաց դատական նիստում, արագացված դատական քննության կարգով քննեց գործն ըստ մեղադրանքի Հենրիկ Արթուրի Գրիգորյանի՝ ծնված 11.12.1985թ. Վանաձոր քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին են գտնվում անչափահաս երեխան և երկրորդ խմբի հաշմանդամ հայրը, չդատված, չի աշխատում, հաշվառված է՝ քաղ. Վանաձոր, Տերյան 12 շենք, բն. 2 հասցեում: Փաստացի արգելանքի տակ է</p>

2011թվականի փետրվարի 09-ից, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:

Գործով ձեռք բերված ապացույցներով պարզվել է հետևյալը.

Լորիս Մուկուչի Ղազարյանի կողմից իրականացված խոշոր չափերի գումարների գողության և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու դեպքի առթիվ, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչ, կապիտան Ս.Մնացականյանի կողմից, 16.02.2010թ. հարուցվել է թիվ 58201210 համարի քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի և 190 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

19.04.2010թ. որոշում է կայացվել Հենրիկ Արթուրի Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչ, կապիտան Ս.Մնացականյանի 19.04.2010թվականի որոշմամբ մեղադրյալ Հենրիկ Արթուրի Գրիգորյանին հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում:

05.05.2010թ. որոշմամբ թիվ 58201210 քրեական գործի վարույթից անջատվել է Հենրիկ Արթուրի Գրիգորյանի վերաբերյալ մասը:

16.06.2010թ. որոշում է կայացվել թիվ 58201210 քրեական գործից անջատված մասով նախաքննությունը կասեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

06.12.2012թվականին որոշում է կայացվել թիվ 58201210 քրեական գործով կասեցված վարույթը վերսկսել:

26.03.2013թ. որոշում է կայացվել թիվ 58201210 քրեական գործից անջատել մեղադրյալ Հենրիկ Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործը և նախաքննությունը շարունակվել է թիվ 58203013 համարի տակ:

26.03.2013թ. որոշմամբ Հենրիկ Արթուրի Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2009 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, ինտերնետային www.visaveryfay.ru կայքից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող և ԱՄՆ բանկերում սպասարկվող բանկային գողացված պլաստիկ քարտերի տվյալներ (քարտապանի անուն, ազգանուն, 16 նիշանոց համարը, քարտի թողարկման և գործունեության ժամկետը, քարտի CVV եռանիշ կոդը) և մտադրություն ունենալով բանկային այդ հաշիվների վրա առկա գումարները հափշտակել՝ 2009թվականի նոյեմբեր ամսին, ԱՄՆ քարտապանների հաշիվներից, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, երկու դրվագներով հափշտակել է զգալի չափերով 361.800 և 461.500 ՀՀ դրամ գումարներ (ընդհանուր՝ 823.300 դրամ), որոնցից՝ հանցավոր ճանապարհով ստացված 461.500 ՀՀ դրամ գումարի եկամուտներն օրինականացրել է (փողերը լվացել է), արդյունքում ԱՄՆ բանկերի կողմից հափշտակված գումարների հետզանձումների պահանջներ են ներկայացվել Հայաստան սպասարկող բանկ հանդես եկած „Հայբիզնեսբանկ” ՓԲ ընկերությանը, այսպես.

Դրվագ 1-ին՝ 2009թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, ինտերնետային www.visaveryfay.ru կայքից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող և ԱՄՆ բանկերում հաշվեհամարներ սպասարկող գողացված քարտային տվյալներ, դրանց վրա առկա զգալի չափերով՝ 361.800 ՀՀ դրամին համարժեք գումարը, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակել և „Արքա” բանկային համակարգի գործածմամբ

փոխանցել է www.tandem.am ինտերնետային կայքում իր կողմից բացված թիվ 4122 վիրտուալ հաշվեհամարին, որից հետո, 2009 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում, տարբեր չափերի գումարներով վճարել ու լիցքավորել է իր ծանոթների և ազգականների կողմից օգտագործվող թվով 31 բջջային հեռախոսահամարների հաշիվները, ինչի արդյունքում „Հայբիզնեսբանկ“ ՓԲ ընկերությանը պատճառել է 361.800 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դրվագ 2-րդ՝ 2009թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, ինտերնետային www.visaveryfay.ru կայքից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող և ԱՄՆ բանկերում հաշվեհամարներ սպասարկող բանկային գողացված քարտային տվյալներ, դրանց վրա առկա զգալի չափերով՝ 461.500 ՀՀ դրամին համարժեք գումարը, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակել և „Արքա“ բանկային համակարգի գործածմամբ փոխանցել է www.tandem.am ինտերնետային կայքում իր կողմից բացված թիվ 4122 վիրտուալ հաշվեհամարին, որից հետո, 2009 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 14-ը ընկած ժամանակահատվածում, մաս-մաս մուտքագրել է www.idram.am համակարգում իր կողմից բացված, սակայն գործարքի հետ իրականում որևէ կապ չունեցող անձի՝ Արամայիս Ավետիսյանի անվամբ գրանցված թիվ 106802315 հաշվեհամարին և սկսել է ուղիներ փնտրել այդ գումարի կանխիկացման և օրինականացման համար:

Այնուհետ, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակված զգալի չափերով 461.500 ՀՀ դրամ գումարը կանխիկացնելու, ինչպես նաև դրա հանցավոր ծագումը, տեղաշարժը խեղաթյուրելու և թաքցնելու համար, Հայաստանի Հանրապետությունից 15.12.2009թ. փոխանցել է Ռուսաստանի Դաշնությունում գրանցված www.webmoney.ru համակարգի թիվ 385504833204 հաշվեհամարին, որտեղից էլ այն կանխիկացվել և տնօրինվել է, ինչի արդյունքում „Հայբիզնեսբանկ“ ՓԲ ընկերությանը պատճառել է 461.500 ՀՀ դրամի գույքային վնաս:

29.03.2013թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան:

Մինչ դատաքննությունն սկսելը, ամբաստանյալ Հենրիկ Արթուրի Գրիգորյանը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, զիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ:

Տուժողի ներկայացուցիչ Ա.Հարությունյանը հայտնեց, որ չի առարկում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու դեմ և ներկայացրեց հայցադիմում, որով խնդրեց Հենրիկ Արթուրի Գրիգորյանից հօգուտ „Հայբիզնեսբանկ“ ՓԲ ընկերության բռնագանձել 5.579.535,20 ՀՀ դրամ, բռնագանձումը տարածել քաղաքացիական պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող գույքի և/կամ դրամական միջոցների վրա: Մեղադրական եզրակացությունում մեղադրող-դատախազը չի առարկել դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ: Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ և 3752-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

Դատարանը հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, գտավ, որ ամբաստանյալ Հենրիկ Արթուրի Գրիգորյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք: ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և

քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Հենրիկ Արթուրի Գրիգորյանի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինս զոջում է կատարածի համար, խնամքին են գտնվում անչափահաս երեխան և երկրորդ խմբի հաշմանդամ հայրը, որ հատուցել է հանցագործությամբ պատճառված անմիջական վնասը և, որ դրականորեն է բնութագրվում „Ուրարտու” համատիրության նախագահ՝ Ա.Ստեփանյանի և ՀՀ ՊՆ 24923 զորամասի 1-ին ՀՆ ջոկատի հրամանատար, փոխգնդապետ Ռ.Գաբրիելյանի կողմից:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատարանը քննության առնելով տուժողի ներկայացուցիչ Ա.Հարությունյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի պահանջը՝ 5.579.535,20 ՀՀ դրամի վերաբերյալ, գտնում է, որ այն ենթակա է քննարկման քաղաքացիական դատավարության կարգով, քանի որ քրեական դատավարության շրջանակներում կարող է քննարկվել միայն հանցագործության հետևանքով անմիջականորեն հասցված վնասը, հետևաբար այն պետք է թողնվի առանց քննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

Վերոգրյալի հիման վրա ու ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360, 3753 հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հենրիկ Արթուրի Գրիգորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտել ազատազրկման 6/վեց/ ամիս ժամկետով՝ առանց տուգանքի:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտել ազատազրկման 2/երկու/ տարի ժամկետով՝ սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի՝ 461.500/չորս հարյուր վաթսուներեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամի բռնագրավմամբ հոգուտ պետական բյուջեի:

ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատժից 3/երեք/ ամիսը գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված

	<p>պատժին և վերջնական պատիժ սահմանել ազատագրվում 2/երկու/ տարի 3/երեք/ ամիս ժամկետով՝ սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված գույքի՝ 461.500/չորս հարյուր վաթսուներեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամի բռնագրավմամբ հօգուտ պետական բյուջեի:</p> <p>Պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:</p> <p>Պատժի սկիզբը հաշվել 2011թվականի փետրվարի 09-ից: Խախտման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:</p> <p>Տուժողի ներկայացուցիչ Ա. Հարությունյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը՝ 5.579.535,20 ՀՀ դրամի վերաբերյալ, թողնել առանց քննության:</p> <p>Հենրիկ Արթուրի Գրիգորյանի գույքի վրա դրված կալանքը թողնել անփոփոխ, մինչև սույն գործով պետ.բյուջեի օգտին բռնագրավման կատարումը, որից հետո գույքի վրա դրված կալանքը վերացնել: Ապացույց ճանաչված թիվ 58201210 քրեական գործով լազերային սկավառակը, թողնել քրեական գործին կից:</p> <p>Ղատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395 հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի:</p>
Ղատական ակտի ամսաթիվը:	23-04-2013
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	30-05-2013
Այլ նշումներ:	Տրվել է կատարողական թերթ/Հօգուտ պետ.բյուջե/
Գործը հանձնվել է գրասենյակ:	06-06-2013
Էջերի քանակ:	Բաղկացած էրեք հատորից՝255,255,244
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	